ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «Ուսանողական աշուն» մարզամշակութային փառատոնի բացմանը

Սիրելի ուսանողներ, համալսարանականներ

Ես անչափ ուրախ եմ, որ ձեր ուսանողական կյանքը հարուստ ու բազմաբովանդակ է անցնում: Բուհական միջոցառումներին, որոնք անխախտ ավանդույթ են դարձել, դուք ամեն տարի հաղորդում եք նոր շունչ, նոր մոտեցումներ: Սա հրաշալի առիթ է թե՛ ղեկավարության, թե՛ դասախոսների, թե՛ ձեր դասընկերների համար ձեզ ավելի լավ ու նորովի ճանաչելու:

Երեկ մեր համալսարանի ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ համատեղ ՀՊՏՀ լավագույն ուսանողի մրցանակ շնորհեցինք ուսման ու հասարակական կյանքի 30 առաջավորների: Ահա այսօր էլ «Ուսանողական աշուն» փառատոնի բացումն է, որն ամեն տարի մեր բուհի մարզամշակութային առօրյան հարստացնում է ու շնորհալի ուսանողների նոր անուններ ի հայտ բերում:

Շախմատի և վոլեյբոլի առաջնություններն արդեն արդյունքներ գրանցել են, մյուս մարզաձևերը առջևում են: Որքանով տեղյակ եմ՝ մշակութային մասը նույնպես հագեցած է անցնելու՝ երգ-երաժշտություն, հնարամիտ ու զվարճալի ելույթներ: Մի խոսքով՝ այս փառատոնը հարթակ է, որտեղ գրեթե բոլորդ դրսևորվելու առիթ ու հնարավորություն ունեք:

Ցանկանում եմ, որ այս տոնական օրերն անցնեն լիաբուռն ու հագեցած, մարզական ոգևորությունն ու առողջ մրցակցությունը ուղեկից լինեն ձեզ, կատակը, երգիծանքը, երգն ու պարը ձեզ դարձնեն ուրախ,

առույգ ու լավատես: Այնուհետև հավատացած եմ կտրամադրվեք նոր աշխատասիրությամբ լծվելու ուսումնական կիսամյակը պատվով ամփոփելու ու բարձր առաջադիմություն գրանցելու գործին:

Հաջողություն և բարձր տրամադրություն եմ մաղթում «Ուսանողական աշուն» փառատոնի բոլոր մասնակիցներին: